

ՄԵՆԿ

Տարեկան դիմել 10 բուր, կէս տարվանը 6 բուր, և ևս անձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զուգընթաց և պատասխանական դասատուների հարցը. Նամակ Բագրուց. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վատիկանը և իրանական հարցը. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ղարսի առողջական դրութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՈՒԳԸՆԹԱՑ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՏՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Թիֆլիսի Բագրուցային դուռայի վերջին, մայիսի 9-ի նիստում, քննարկեցին վերջնականապէս Թիֆլիսի արական դիմադրականների և պրոգրեսիվիստների դուգընթաց և նախապատրաստական դասատուները չէ փակելու հարցը: Այդ հարցի մասնաժողովը քննարկեցին արդէն յայտնի են: Պաշտօնական ճիշդ տեղեկութիւններ ձեռք բերելու համար, համաձայն դուռայի վճիռ, քաղաքագլուխը դիմելով Թիֆլիսի առաջին գիմնադիպի գերակառն պ. Մարկոսին, խնդրել է նրանից մի քանի մասնաժողովներ: Գիմնադիպի վարչութեան տուած տեղեկութիւնները երևում է հետեւալը. զուգընթաց դասատուները պահելու համար հարկաւոր է տարեկան 17,730 բուր, դրանից 11,000 բուր լին ստացվում է ուսման համար նշանակած վարձից. իսկ 5,000 բուրը տրվում է ժողովրդական լուսաւորութեան միջնատրութեան գումարներից: Ուրեմն պակասում է միմիայն 1,730 բուրը չէն չին գումարը՝ զուգընթաց դասատուները պահելու համար, և այդ գումարից է կախված այժմ այդ դասարանների պահելը, ինչպէս ասում է կտրական կերպով գիմնադիպի վարչութիւնը: Ահա հէնց 1730 բուրըն տալով, կարող էր քաղաքային վարչութիւնը իր կողմից նպաստել զուգընթաց դասատուների բաց մնալու դործին:

Այդ նոյն հարցի վերաբերութեամբ, դուռայի նոյն նիստի մէջ վարչութեան անգամ պ. Իզմայլով յայտնեց, թէ իր ունեցած տեղեկութիւններից, որ նա ստացել է Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուից, երևում է, որ գիմնադիպի կարող է պահել իր զուգընթաց դասատուները նոյն իսկ այն դրամական միջոցներով, որոնք գտնվում են գիմնադիպի կարգադրութեան ներքոյ: Իսկ մի քանի ձայնավորներ ակնարկեցին և այն կէտի վրայ, որ առաջին գիմնադիպի կարող է շատ հեշտութեամբ

ձեռք բերել այդ 1,730 բուրըն, եթէ մի քանի ոչ-անհրաժեշտ ծախսերի խնայողութիւն անէ: Այդ բոլորի հիման վրա դուռան այն հոգաբարձուին եկաւ, որ զուգընթաց դասատուների գոյութիւնը այժմ ապահոված կարելի է համարել, և այդ պատճառով քաղաքի կողմից նպաստ տալու հարցը մի կողմ թողնեցաւ:

Դրանից յետոյ ուշագրութեան առնվեց նախապատրաստական դասատուների պահպանութեան հարցը, որի մասին ևս տեղեկութիւն էր խնդրված գիմնադիպի գերակառնից, բայց գերակառնը այդ մասին ոչինչ չէ հաղորդել, յայտնելով, որ այդ հարցը քաղաքագլուխին սահմաններում պէտք է մնայ՝ համաձայն ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կարգադրութեան: Դուռան վճիռը անմիջապէս դիմել ուր հարկն է, և խնդրել որ պատրաստական դասատուները չը փակվեն, ի նկատի ունենալով նրանց անհրաժեշտութիւնը: Այդ պիտով զուգընթաց դասատուների հարցը միայն յաջող կերպով վերջացած կարելի է համարել:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 6-ին Այսօր, ժամի 12-ին, այստեղի տօնավաճառի հրապարակի վրա ուսու հոգեւորականութիւնը, ներկայութեամբ նախագահների, քաղաքագլուխի, քաղաքային վարչութեան անդամների և փոքրաթիւ հասարակութեան (հասարակութիւն թիւ էր հաւաքվել անձրի պատճառով) կատարեց մաղթանք, որից յետոյ յայտարարվեց, որ տօնավաճառը բացված է համարվում: Անմիջապէս բարձրացրին դրօշակը, իսկ օրկեստրը հնչեց ուսուց ազգային հիմնը: Այս բոլորից յետոյ նախագահները և միւս պաշտօնական անձինք ցրվեցան, իսկ քաղաքագլուխը և նրա օգնականը սկսեցին պտտել նոր բացված խնայութիւնները:

Այսօր Նիկողայոսեան տօնավաճառը մտնում է իր գոյութեան երկրորդ տարեշրջանը և, պէտք է ասել, որ խոստանում է աւելի արդիւնաւէտ լինել, քան թէ նախընթաց տարին: Բագու, որ հռչակված է իր նախընթաց արդիւնաւորութեամբ, անկասկած սրանից յետոյ նա աւելի ևս կը հռչակվի իր տօնավաճառով: Այս երկու պայմանները ապագայում շատ պիտի նպաստեն քաղաքին զարգանալու և նիւթապէս հարստանալու: Մի խօսքով՝ Բագուին փառաւոր և փայլուն ապագայ է սպասում և վիճակված է նրան ապագայում առաջնակարգ դեր կատարել Միջին-Ասիայի և Կովկասի առևտրական յարաբերութեան մէջ:

ուսումնական մասնաժողովը արդէն մի քանի տարի է, որ սկսել է իր օգտաւէտ գործունէութիւնը և Ռուսաստանի բոլոր դէմադիմները, իրանց բնօրինակներով ու մասնագէտներով՝ շարունակ աշակցում, օգնում են յարգելի մասնաժողովին՝ իր հասարակական գործունէութեան մէջ: Նշանաւոր գիտնականների տուած վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ Ռուսաստանը, համեմատելով միւս եւրոպական ազգերի հետ, առողջութեան կողմանէ, շատ աննախանձելի դրութեան մէջ է գտնվում, այսինքն Ռուսաստանի պիտի ընդարձակ տեղութեան մէջ հիւանդութիւնը և մահը աւելի յաճախ, աւելի մեծ քանակութեամբ է կատարվում, քան թէ Եւրոպայում որ է մի տեղ:

Ռուսաց պարբերական մամուլը, ժողովրդի առողջական դրութիւնը քննելով, գալիս է այն եզրակացութեանը, որ հասարակական ակտերի և հիւանդութիւնների առաջն առնելու համար, անհրաժեշտ է, որ բժշկական օգնութեան հետ միասին, տարածվի ժողովրդի մէջ և առողջապահական գիտութիւնը:

Այս նպատակով, թէ լրագրիներում և թէ առանձին հրատարակութիւններով մէջ, ներկայումս շարունակ դուրս են գալիս այնպիսի յօդուածներ, որոնց մէջ՝ հասկանալի և պարզ լեզուով բացա-

Առայժմ պէտք է աչքի առաջ ունենալ նրա մասով հասակը, նրա առևտրական շրջանառութիւնը որը 100,000-ից հազիւ է անցնում, բայց ապագայում, երբ տօնավաճառի մէջ կը սկսեն մասնակցել Ռուսաստանի վաճառականներն ևս, աներկայելի է, որ պիտի միլիոններ շրջանառութիւններ կատարվեն: Ներկայումս դեռ մեծ ֆիրմաները քաղաքայում են, երկի սպասում են հետևանքին, թէ ինչպէս կը գնան գործերը և կամ երբ տօնավաճառը կը տեղափոխվի իր որոշած տեղը և կը չինեն յարմար խանութները: Բայց հազիւ թէ վերջինս զալ տարի դուրս գայ, որովհետև տեղական վաճառականներից շատերը չեն համաձայնվում այն պայմանների հետ, որ առաջարկում է քաղաքային վարչութիւնը, համարելով այդ պայմանները բոլորովին անձեռնտու: Առայժմ տօնավաճառը բաւականաճառ է մի քանի տասնեակ փայտաշէն և քարաշէն խանութներով, որոնք բաւական թանկ գնով արդէն վարձով են տուած՝ այդպէս քարաշէն խանութները մի ամսվայ համար տուած են 100—250 ռ., իսկ փայտաշէն խանութները 60—80 ռ. դրանց մեծ մասում արդէն ըստ են դրել տեղական հայ և հրէայ վաճառականները: Հրէական առևտրի նիւթը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ տեղիս խանութներում տարիներով թափված, հին և չը ծախվող ապրանքներ, որոնց դուրս են բերել հրապարակ և ստու ընկալմանը, ինչպէս օրինակ «КОНКУРЕНЦИЯ ИЗЪ МОСКВЫ» և այն անուններով, գրաւում են միամիտ ժողովրդին, որոնք ևս գնում են, կարծելով, որ ամենայն ինչ, որ դուրս է բերվում տօնավաճառ, անպայման լաւ է և էֆան: Օտար վաճառականներից առայժմ միայն մի քանիսն են աչքի ընկնում, բայց պէտք է նիւթադրել, որ նրանք բոլորն էլ կը գնան, քանի որ անցեալ տարի նրանք լաւ շահվեցան: Տօնավաճառում կան և մի երկու հիւրանոցներ էլ, որոնց մէջ խմբված երգչուհիները մի տեսակ հրապարակներ են դարձել ժողովրդի համար: Տօնավաճառը շրջապատված է ջրի խողովակներով և պահպանում են հրաշքները:

Թեմիս առաջնորդ Մեսրոպը եպիսկոպոսը մօտ երեք շաբաթ է ինչ մեղ մօտ է գտնվում. այդ ժամանակամիջոցում նա արել է հետեւալը, մի քանի այցելութիւններ է տուել պաշտօնական անձանց, այցելել է հին երեցփոխի ամարանոցը և խօսել է մի քանի անգամ քարոզներ, որոնց մէջ նա ի միջի այլոց յայտնել է իր գալու նպատակը: Որքան լսեցին, հետեւալն է եղել սրբազանի գալու շարժառիթը. 1) ժողովարարութիւն անել յօգուտ Եւրոպայի տաճարի վերաշինութեան,

տրվում են ուսու ժողովրդին առողջապահական օրէնքները, աշխատելով ցոյց տալ՝ այս գիտութեան մեծ և բարերար նշանակութիւնը: Ահա հասարակ պէտք է նկատել, որ Ռուսաստանում ամբողջ հասկացող, ինտելիգենտ կոչված զաւակաւորը, ներկայումս, մեծ եռանդով ու ինքնազօհութեամբ աշխատում է բարոյեղ ժողովրդի տնտեսական և առողջական դրութիւնը: Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, կարելի է սպասել, որ Ռուսաստանում առողջական պայմանները հետզհետէ կը լաւանան և ապագայում նշանաւոր կերպով կը փոխեն ժողովրդի կենսական ծանր հանգամանքները: Սակայն մի և նոյնը չէ կարելի ասել Ռուսաստանի հեռավոր նահանգների, օր. Անդրկովկասի վերաբերութեամբ: Այստեղ հասարակական առողջութիւնը շատ ընկած և արհամարհված դրութեան մէջ է: Մեր տեղե ժողովուրդը բոլորովին անկարող է հասկանալ և մտածել իր առողջութեան մասին, և չը կան մարդիկ, չը կան այնպիսի հասարակական հիմնարկութիւններ, որոնք աշխատէին հոգալ ժողովրդի առողջութեան և կենքի ապահովութեան վրա: Մէկ կողմից տեղե տեսական աղքատութիւնը, միւս կողմից ժողովրդի տեղեկութիւնը՝ ամեն տեղ առաջ են բերում հասարակական մեծամեծ թշուառութիւններ, որոնց մէջ՝ կենքի և առողջութեան ընդհանուր

2) վերջ տալ հին երեցփոխի հաշիւների վերաբերեալ տարաձայնութիւններին, 3) քարոզիչ վարդապետի մասին խօսել Մարդասիրական ընկերութեան վարչութեան հետ, 4) բաժանել ժողովուրդը ծովների և 5) քահանայացուների ընտրութիւն անել: Այս հարցերի մասին երկար խօսվել է մի ժողովում, որը քաղաքացած է եղել տեղիս հասարակութեան ներկայացուցիչներից: Այդ ժողովը եկել է հետեւալ եզրակացութեան. առաջին հարցը, այն է ժողովարարութեան հարցը, որ առաջարկել է սրբազանը, ընդունել են ժողովականները, յայտնելով որ Բագու հրէք չէ հրաժարվել ոչ մի ժողովարարութեան մասնակցելուց, և այս անգամ էլ չի հրաժարվի. մասնաշրջոց են արել քաղաքի մի քանի հարուստների վրա, որոնք կարող են ժողովարարութիւն անել: Ժողովականներից մի քանիսը ակնարկել են առաջնորդին այն բանի վրա, որ դրա աշխուրթիւնը կախված է մասամբ նրանից, թէ ինքը հոգեւոր իշխանութիւնը ինչպէս կը վերաբերվի դէպի ժողովրդին զբաղեցնող հարցերը: Երկրորդ հարցը՝ այն է երեցփոխի հարցի մասին, սրբազանը ասել է, որ երեցփոխի հաշիւների մասին կոնսիստորիան վճիռ կը կայացնէ: Ժողովում յայտնել են, որ հին երեցփոխը ահա երկու ամիս է չէ կամենում նոր երեցփոխի յանձնել հաշիւները, որի պատճառով վերջինս չէ կարողանում մտնել իր պաշտօնի մէջ, իսկ դրա հետեւանքը այն է, որ եկեղեցին և ուսումնարանը բաւական տուփում են, եպիսկոպոսը յայտնել է, որ կը հրամայէ բարեկարգչին, որ հին երեցփոխից առնէ հաշիւները և յանձնէ նորին: Ինչպէս երևում է ամեն բան էլ թողված է ապագային, իսկ այդպիսի հարցերում ապագային հաւատացող շատ թիւ կայ:

Քարոզիչ վարդապետի հարցի մասին խօսելով, առաջնորդը յայտնել է, որ այդպիսին Եւրոպայի միաբանութեան մէջ չը կայ, և որ առայժմ պէտք է բաւականաճառ մի քահանայով: Իսկ ինչ վերաբերում է ժողովարարութեան ծովների բաժանելու հարցին, թէ երեցփոխը և դեր և դէմ խօսողներ, բայց ի վերջոյ յամաձայնվել են, որ կարելի է բաժանել: Քահանայացուների հարցի վերաբերութեամբ եղել են տաք վիճարարութիւններ: Այստեղ ժողովականները յայտնել են, որ պէտք է մերժել ներկայ տիրացուին, որովհետև Բագուի հասարակութեան պահանջը մեծ է, և նրան պէտք է մի լաւ և հասկացող քահանայ: Առաջնորդը, որ վաղուց տեղեին է այդ գործի ծածկված կողմերին, պատասխանել է, որ ինքը չը նայի ստորագրութեան թերթին և ըստ այնմ կը վարվի:

անկուճը գլխաւոր տեղն է բռնում: Իբրեւ օրինակ, վերցնենք Թիւրքաց սահմանի մօտ գտնվող, փոքրիկ գիմնադիպի քաղաքը՝ Կարսը:

II
Շատ վաղ ժամանակներից՝ Կարսը յայտնի է, որպէս կեղտոտ և անապատ քաղաք: Ալէքսանդրոպօլից մի առանձին արհամարհանքով են վերաբերվում դէպի այդ քաղաքը և նրանց արհամարհանքը երևում է նրանից, որ միշտ, Կարսի անունը տալիս, առաջին տեղեկանքում են «կեղտոտ» բառը: Եւ ճշմարիտ, կեղտոտութիւնը, անմաքրութիւնը մի սովորական և անզգալի բան է Կարսի համար:

Քաղաքի փողոցները և տները անտանելի են իրանց կեղտոտ և ապականված դրութեամբ: Ժողովրդի հասարակ, աղքատ զաւակաւորը միանգամայն ցնխի և ապականութեան մէջ է ապրում: Հնաշէն, քանդված տներ, մարաքների և ախոռների մէջ՝ այնքան վնասակար, դարչելի կեղտեր ու անապատութիւններ են հաւաքված, որ այս տեղերի մօտով անցնող անապատում ստիպված կը լինի ամուր ծածկել իր թիթի ու բերանը: Եւ այս բոլոր «կեղտանքը», մնալով քաղաքում, տներին ու փողոցներին մէջ, շարունակ ապականում, վարակում է այն օդը, որով շուռչ են քաշում հաղարար մարդիկ: Եթէ սրան աւելացնենք և այն մեծ

Գրան ժողովականներից մէկը պատասխանել է, որ դրա վրա չը պէտք է ուշադրութիւն դարձնել, որովհետեւ յայտնի է, թէ ինչպէս են մեր մէջ այդպիսի ստորագրութիւններ հաւաքուիւմ և իբրեւ ապացոյց իր խօսքերի յայտնել է, որ կարելի է մի շարքով 200-ի դէմ 400—600 ստորագրութիւն դուրս բերել, որոնց թուում կը լինեն և հակառակ թերթի ստորագրողները: Այս հիման վրա խնդրել են առաջնորդից, որ կազմէ մի հասարակական ժողով և ընտրութեան հարցը ենթարկէ ձայնաւորութեան: Ժողովուրդը անհամբեր պատահում է այդ ժողովին, որտեղ նա կարող է իր ձայնը լսել տալ, քանի որ ոչ-հրապարակական կերպով գործելով՝ միշտ գործը զոհւում է ինտրիգաների և խարդախութիւնների: Լուր կայ որ սրբազանը քահանայացուի վերաբերմամբ իր սեփական հայեցակէտն է կազմել և կամենում է անպատճառ ձեռնադրել տիրացուն, թէ ինչ է պատճառը,—այդ յետոյ կը պարզվի. բայց զըմբար թէ սրանով թեմի առաջնորդը խաղաղութեան և հաշտութեան գործին նպաստած լինի, նոյն իսկ մի քանի շաբաթ Բագուում նստելուց և այս կամ այն կուսակցութեան ազդեցութեան ենթարկելուց յետոյ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեզ գրում են. «Մայիսի 3-ին այստեղ պատահած երկրաշարժից յետոյ, ժողովուրդի մի քանի, զիջաւորապէս տգէտ չըլաններում, այնպիսի կարծիք է տարածված, որ այդ երկրաշարժը պէտք է կրկնվի և պէտք է մեծ վնասներ տայ: Թէ որքան վնասակար են այդպիսի անհիմն ենթադրութիւնները ժողովուրդի համար,—այդ բացատրութեան կարօտ չէ. տարաբաղադար շատ զօրութիւն է համոզել տգէտ ամբոխին, որ ոչինչ առիթ չը կայ սաստիկ երկրաշարժի սպասելու:»

Լուցկիի գործարանների մասին հրատարակված պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ Ռուսաստանում 1865 թվին կար 73 լուցկիի գործարան. 1875 թվին դրանց թիւը հասաւ 223-ի, և այդքան գործարանների մէջ պատրաստվում էր 1,350,000 ռուբլու լուցկի. իսկ 1885 թվին այդ գործարանների թիւը աւելացաւ էլի 193-ով, որոնք ընդամենը պատրաստում են տարեկան 2,305,000 ռուբլու լուցկի:

Ինչպէս հաղորդել է մեզ «Հիւսիսային գործակալութիւնը» Բագուի Նիկողոսեան տոնավաճառը այս օրերս բացվեցաւ արդէն: Սպասում են որ այս տարի տոնավաճառը աւելի բազմամարդ կը լինի և աւելի շատ գործեր կը կատարվեն, քան թէ անցեալ տարի, որը տոնավաճառի գոյութեան առաջին տարին էր:

ԻԳՒԻԻԲ մեզ գրում են «Կարմուխը չը վերջացած, սկսել է մեզ մօտ երևալ կապոյտ հագը: Տուն չը կայ, որի մէջ մի երկու հօգի չունենան այդ հագը: Մանուկները զոհ են գնում կապոյտ հագին:»

Քանակութեամբ սարսափելի ծովը, որ ամենայն օր դուրս է գալիս տներին, բաղնիքներին և հացթուխներին բալթաթիւ կտուրներից, և այն խեղդող, աչք կտրեցնող փոշին, որ միշտ չոր եղանակում, անպակաս է կարսի փողոցներից,—այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչ գերազանց առողջական (?) յատկութիւններ ունի այն օդը, որ ամենայն մի վայրկեան մաքրում, խտտւում է կարսիցիների ապականված արիւնը: Չը պէտք է մոռանալ և այն, որ քաղաքը տեղաւորված է մի նեղ ու խոր փողոց մէջ, երկու կողմից չըլապատված բարձր ապուրտներով, և այդ խորութիւնից օդը, հանդարտ եղանակում, աւելի դանդաղ է մաքրվում, աւելի զօրաբարձրութեամբ է հեռանում քաղաքի վրայից ապականված մթնոլորտը:

Սակայն կարսի հասարակութիւնը ամենին չէ էլ մոռնում այս բաների վրա. ապուրտի և նիւթական չափ ամենօրեայ խնդիրները այնպէս դրանք, պաշարել են ժողովուրդի ուշադրութիւնը, որ նա բոլորովին մոռացել է հողալ իր առողջութեան մասին: Բացի դրանից՝ հասարակութեան մեծ մասը չէ կարողանում հասկանալ և գնահատել օդի զանազան տեսակները, այդ ներքին կարծիքով, չափազանց երկրորդական, դատարկ բաներ են: Եւ այսպէս, անհոգ զրութեամբ

Մեզ գրում են ԻԳՒԻԻԲ մայիսի 1-ից հետեւեալը: «Արաքսը նորից բարձրացել է. անցում դառն զօրաբարձր է: Պարօլը չէ բանում այլևս, որովհետեւ լարը, որի վրա պտտում էր պարօլի ճախարակը, ծածկված է ջրի տակ: Պատը կանոնաւոր կերպով ստացվում է դեռ ևս: Ինչպէս երևում է կամուրջը չը պէտք է չինվի:»

Մեզ գրում են ԳՕՐՈՒՑ, որ մայիսի 1-ին, առաւօտեան ժամը 9-ին սարսափելի անձրեւ եկաւ: Գօրում և քաղաքի չըլակայ մի քանի գիւղերում, ինչպէս Ուրիլիցիէ, Տիւրիլիցի, Խելթուքան, Լէխէ, Բուխ և այլն: Անձրեւից յետոյ յաջորդեց կարկուտը, որ մեծ վնաս հասցրեց յիշեալ գիւղերից մի քանիսն: Գնացանք Գնացանի Կարկուտի ժամանակ բարձրացաւ այնպիսի սաստիկ քամի, որ մի քանի ընկուզենի ծառեր արմատահան եղան: Այդ սաստիկ փոթորիկի ժամանակ Պատարկուտի գիւղի 7 տարեկան երկու մանուկներ մոլորվում են դաշտերում և կիսամեռ դրութեան մէջ աղաւթում են մահից մի հօվուի ձեռքով, որը տանում ապաստանում է երկու մանուկներին Ուրիլիցիէի գիւղի մօտ գտնված քարայրի մէջ:

Թիֆլիսի Բանդնից եկեղեցու երեցիոյ Գեորգ Աբրեմանցի վարմունքը սկսում է զաւառներումն էլ հետեւողներ ունենալ: Մեզ գրում են, որ Արգահանի եկեղեցական մի երեցիոյ յայտնել է, որ հրաժարվում է ծովին հաշիւ ներկայացնելուց, որովհետեւ ընտրված հաշիւատեսներ իր հաւանած մարդիկ չեն:

ՄՕՍԿՎԱՅԻ ռուսաց լրագրողներում կարդում ենք, որ հանգուցեալ Յովհաննէս Անանովի թաղումը շատ մեծ ջանքով թաղում է կատարվել Մօսկվայում: Հանգուցեալը թաղվեցաւ Մօսկվայի հայոց գերեզմանոցում: Թաղման հանդիսին ներկայ էր ամեն ազգութեան պատկանող ահագին ընդունութիւն, ներկայ էր մինչև անգամ և Մօսկվայի գերեզմանահանգապետ իշխան Գօրգորովսկի, որ իր կողմից մի ծաղիկայ պսակ դրեց Անանովի դաղի վրա: Կային և ուրիշ մի քանի պատկանող հանգուցեալի մարմինը դրված էր ընկողնայ դաղի մէջ, որի ներքո ծածկված էր մալմուրով ինչ սակ կողմ որ Մօսկվայի ամբողջ հայոց կօլնիսան ներկայ էր յուզարկաւորութեան հանդիսին:

ԱՐԱՍԹՈՒՄԱՆԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Արասթումանում այս տարի պահանջի համապատասխան թուով կան ճաշարաններ և ամենալաւարդ հիւրանոցներ, ամենի համար մատչելի գնով: Արասթումանի վարչութիւնը միշտ աշխատում է բաւականութիւն տալ ամեն զանապաղի այցելուներին ամենանորմալ պահանջներին: Բնակարանները այստեղ անհամեմատ էժան են և ձեռնառու: Անցեալ տարիներին տաքածայութիւնները վերացրած, այժմ Արասթումանը կարող է հրապարակ գալ և պարծնալ իր ամեն յարմարութիւններով և առաւելութիւններով, քան շատ

այլում է մեր ժողովուրդը, չըլապատված ամեն կողմից կեղտով ու ապականութիւնով, շնչում է փչացած, վնասակար օդը, որի կործանիչ ազդեցութեան տակ, մարդիկ, դանդաղ քայլերով, բոլորովին անզգայաբար, մոռնում են իրանց դեռահաս վախճանին...»

Որպէս զի քաղաքի օդը ապականող զիջաւոր պատճառների մասին աւելի ճիշդ գաղափար կազմէ ընթերցողը, պէտք է յիշել և այն նշանաւոր ընկեր, որ կոչվում է «Շարաբա»: Այդ Շարաբը կազմվում է ամենայն տարի, ձմեռան վերջերին, քաղաքի արևելեան մասում: Երբ որ դարձն սկսում է ամառնալ, չըլակայ բարձրութիւններից ձիւնը քիչ-քիչ սկսում է հալվել և, ահագին վտակով (Տար-Բօղազ) դալիս լցվում է այդ փոս տեղը, կազմելով սկզբում բաւական ընդարձակ մի լիճ: Հէնց այդ լճի ջուրն էր, որ անցեալ տարի, չափից դուրս շատանալով, եկաւ ծածկեց համբրեւ քաղաքի մեծ մասը և այնքան զգալի վնասներ տուեց ժողովուրդին: Այս տարի, բարեբաղադար, ջուրը քիչ էր և միայն երեք օր նա հոսեց գիւղերից, քաղաքի միջով, կէս արշին խորութեամբ վնասը անդուք անցրեց: Սակայն, այսպէս հոսելով, լճակի ջուրը բոլորովին չէ վերջաւորում: Ամառվայ յունիս և յուլիս շրջ միմյանքին այդ լիճը անտանելի կերպով սկսում է հոսել,

և շատ ավարանդներ: Բացի ծծալային ջրերի աւազաններից, կան ամեն տեսակ յարմարութիւն ունեցող սառն լողարաններ: Առ այժմ չեն խօսում և Ուրալէի երկաթահանքային ջրի մասին, (որ գտնվում է Ախալցխայից 12 վերստ հեռավորութեան վրա դէպի արևելահիւսիս), որ Արասթուման գիւղերից շատերը այցելելով, վերադառնում են այնտեղից նորոգված և կազդուրված:

ՄՕՁՂՕԿԻՑ մեզ գրում են, որ հանգուցեալ Բաֆֆիի համար խորին ցաւակցութեամբ մայիսի 1-ին հոգեհանգիստ կատարելուց յետոյ, միտք յղացաւ ստորագրութիւն բանալու, որից հոյացած գումարը պէտք է յատկացվի Բաֆֆիի գերեզմանի վրա արձան կանգնեցնելու գործին:

Մայիսի 10-ին գիւղերվայ եկած անձրեւի ժամանակ, Միքայէլեան փողոցի վրա հետեւալ դէպքն է պատահել: Առաւօտեան մօտիկ փողոցով հոսում էր ահագին ջուր: Ամառային կուրբի դիմաց կանգնած ոտիկանը և կուրբի այգեպանը տեսնում են փողոցով հոսող ջրի մէջ մի արկղ. թով գցելով արկղը քաշում են, հանում և բացելով մէջը զըտնում են մի նորածին մանուկ. մանուկը ուղարկված է մանկաբարձական ինստիտուտ:

Մեզ խնդրում են տպել հետեւեալ նկատողութիւնը. «Թիֆլիսի քաղաքային դռման, ինչպէս յայտնի է, նշանակեց տուրք քաղաքիս շուկաներում գիւղական արդիւնաբերութիւնները վաճառահանող գիւղացիների սպիւնի վրա: Իսկ քաղաքային վարչութիւնը, որի պարտքն է հսկել տուրքը հաւաքելու վրա, բոլորովին ուշք չէ դարձնում թէ ինչ ատիւնների բարեխղճութեամբ է կատարվում դռմայի վճարը: Յայտնի է որ այդ տեսակ քաղաքային տուրքերը հաւաքվում են վարչութեան մանրուսներ ծառայողների ձեռքով, որոնք շատ անգամ չեն քաշվում խաբէլու ողորմելի գիւղացիներին: Գիւղացիք էլ զանազան ճնշումներից և յիշեալ տուրքերից ազատվելու նպատակով իրանց արդիւնաբերութիւնները, ինչպէս ալիւր, ցորեն, դարի, պանիր և այլն, չեն բերում այլ ևս ուղղակի շուկան, այլ տանում են զանազան յետնիկած քարվանսարաններ և դռմեր, որտեղ անհրաժեշտութեամբ և տեղացի չարչիկներ կիսագնով այդ բոլորը առնելուց յետոյ՝ կրկնակի գնելով ծախում են քաղաքացիներին, որից վնասվում է թէ գիւղացին և թէ քաղաքացին: Այդ դեռ բաւական չէ, նոյն իսկ այդ պատճառով շուկաներում այժմ շատ միջերընթ չեն գտնվում, և այդ բանը քաղաքացիներին բաւական զօրաւորութիւն է պատճառում: Բաւական չէ տուրքեր նշանակել, պէտք է հսկել նրանց կանոնաւոր հաւաքելու վրա, որպէս զի մի գեղծումից աւելի մեծ գեղծում առաջ չը գայ:»

Ստացանք ԱՂՂՇԻՑ պ. Լևոն վարադեանցից, քառասուն ռուբլի հետեւեալ նամակով: «Լիպոյս եմ որ չէք մերժի հասցնել ըստ պատկանելոյն ընդ սմին ուղարկված 40 ռուբլին, որ հանգանա-

նրա մէջ գոյանում են դրոտեր և ուրիշ ջրային մանր կենդանիներ: Շրջակայ օդը լցվում է բազմաթիւ մանր ու խոշոր ձանձնիկով, որոնք լճից բարձրացող գոլորշիների և այլ տեսակ վնասաւոր միջոցների հետ, քաղաքի հոսանքով, գալիս լցվում են քաղաքի մէջ և, այդպիսով, աւելի թունաւորում, անտանելի են դարձնում այստեղի օդը: Այն, անտանելի է ամառը կարսում, անտանելի է մանաւանդ և այն պատճառով, որ այստեղ չը կայ բուսականութիւն, չը կան ծառեր ոչ քաղաքում, տներին մօտ, և ոչ էլ նոյն իսկ քաղաքային պարտիզում (?)։ Առատ և թղթերի լացող գարշահոտութիւնների, ճնշող և անտանելի շոգ, ցեխ, ապականութիւն և լուծվող, քայլով օրգանական մնացորդներ—ահա ձեռք կարսի ամառվայ պատկերը: Եւ զարմանալին այն է, որ մարդիկ հաշտվում են այս դրութեան հետ, չեն զգում իրանց կեանքի անյարմարութիւնը և դարձեալ շարունակում են ապրել (է) ամեն տեսակ թոյններով լցված օդային մթնոլորտի մէջ:

III

Բացի վնասակար օդից, կայ և մի ուրիշ հաւկառողջական ֆակտոր, որի հասցրած վնասը նոյնպէս ահագին ազդեցութիւն ունի կարսի հասարակութեան վրա: Իմ խօսքը ջրի մասին է:

կել են տեղիս հայերը յօդուտ ջէլթունի հրկիւղեաների: Ուշ ուղարկելու պատճառը առաջացած է մասնաւոր անակնկալ հանգամանքներից:»

ՆՈՒԻՍԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Ամսիս 9-ին, կիրակի, տեղիս Ս. Աստուածածնի եկեղեցում Բաֆֆիի յիշատակին հոգեհանգիստ կատարելուց յետոյ, վահան վարդապետ Տէր-Գրիգորեանց կարճատեւ կերպով պատմեց Բաֆֆիի կենսագրութիւնը, խօսեց նրա աշխատութիւնների և աղգին մատուցած նրա ծառայութիւնների մասին և ապա առաջարկեց ստորագրութիւն բանալու և գոյացած գումարի տոկոսով մի աշակերտ պահել միջնակարգ դպրոցներից միում, այդ աշակերտին ապագայում քահանայ ձեռնադրելու նպատակով, քանի որ Նովոսու վիճակը կարօտ է օրինաւոր քահանաների: Աշակերտը պէտք է կրէ «Բաֆֆիի որդեգիր» անունը: Յանկալի է, որ նույնիցք իրաւործէին արժանապատիւ հօր առաջարկութիւնը:»

Մայիսի 8-ին Թիֆլիսի քաղաքային թատրոնում ռուսաց օպերետային խումբը, որ խաղում է սովորաբար Միխայիլովսկայա փողոցի վրա գտնված ամառնային մի թատրոնում, ներկայացրեց Շտրաուսի «Цыганский баронъ» (Բօշաների բարոն) վերնագրով գեղեցիկ օպերետը: Այդ օպերետի երաժշտութիւնը շատ սիրուն է: Հասարակութիւնը կրկնել տուեց մի խօր և մի վայս (տորի)։ Թատրոնը կիսով չափ լի էր հասարակութեամբ: Երգիչներից միմիայն տիկին Պաուլի, որ ունի մի հիւսիսային դուրեկան կոնտրալտո, արժանացաւ բազմաթիւ հանգանակների: Մնացած երգիչները շատ աննշան ձայներ ունեն:

Կիրակի, մայիսի 8-ին, ժամը 12-ին, ԹԻՖԼԻՍԻ քաղաքային դռմայի դահլիճում, քաղաքապետի ներկայութեամբ, կատարվեցան Թիֆլիսի որբերի դատարանի նախագահի ընտրութիւնները: Ընտրողներն էին 102 հոգի պատգամաւորներ՝ վաճառականներ, մեշտաններ և արհեստավորների դասակարգերից: Ժողովը նախ և առաջ գիմեց որբերի դատարանի այժմեան նախագահ Գեորգ Թամաշիւկին, խնդրելով որ նորից և առանց թուէրկութեան յանձն առնի առաջվայ պաշտօնը, բայց պարտի հրաժարվեց, պատճառելով ժամանակի պակասութիւնը և մասնաւոր հանգամանքները: Ապա տեղի ունեցան ընտրութիւններ գաղտնի թուէրկութեան միջոցով և որբերի դատարանի նախագահ ընտրվեցաւ պ. Մնացաւան: Միւս ընտրվիներից՝ Արծրունի ստացաւ 55 սպիտակ և 47 սև թուէ, Խոսրոսի 44 սպիտակ և 58 սև թուէ և վերջապէս Բէկխանով 31 սպիտակ և 71 սև թուէ:

Մայիսի 10-ին, ԹԻՖԼԻՍԻՄ, գիւղերվայ ժամը 3-ին, սկսեց տեղալ սաստիկ անձրեւ, որի հետեւանքն այն եղաւ, որ փողոցներից շատերը 1 1/2 արշին բարձրութեամբ աւաղով լցվեցան, իսկ աւաղի վրայով ջրի հոսանքը հետդհուէ բարձրա-

Ամբողջ կարը (մանաւանդ չըւաւորները) խումբ և գործ է ածում կերակրի մէջ այն կեղտոտ, ապականված գետի ջուրը, որ, հոսելով քաղաքի միջից, ընդունում և լուծում իր մէջ ամեն տեսակ աղը ու ապականութիւններ: Բազալի բնակիչները մեծ մասը, ուղղակի, առանց մաքրելու, խումբ է այդ ջուրը, առանց հասկանալու թէ սրայի կորստաբեր ու վտանգաւոր յատկութիւններ ունի նրանց խմած ջուրը, և ինչպիսի թշուառ հետեւանքներ կարող են առաջ գալ դրանից՝ թէ իրանց, խմողների, և թէ, առհասարակ, բոլոր քաղաքացիների համար վերջին տարիներում Ֆրանսիացի և գերմանացի նշանաւոր գիտնական-բայերի վաստակով ապացուցին բժշկականութեան մէջ այն մեծ գիտնական օրէնքը՝ թէ բոլոր տարափոխիկ, վարակիչ հիւանդութիւնները առաջանում և զարգանում են չորսով մանրադիտակայ սողմերի (bacterium), որոնք անթիւ քանակութեամբ գտնվում են օդի և բաց ջրերի մէջ: Այդ փոքրիկ և հասարակ աչքով անտեսանելի կենդանիները, որ ամեն կողմից բիւր միլիոններով չըլապատում են մեզ, ունեն զանազան յատկութիւններ և, իրանց յատկութիւնների համաձայն, աճում և զարգանում են որոշ յարմարութիւնների, որոշ հանգամանքների մէջ: Սակայն, որ-

հրկի-
րից»:

Ամսիս
կիցդե-
տարե-
անց
գորու-
ադ-
ն և գո-
պահե-
լուին
ակով,
աւար
Ֆիլի-
ք Է-
թիւ-

նաւով, մեծ քանակութեամբ թափվեց թէ բնակա-
րաների և թէ ներքնայարկերի մէջ: Տները մի
քանի պատերը փլուզեցան: Առ այժմ յայտնի չէ,
թէ հեղեղից մարդկանց հետ դժբաղդութիւններ
պատահած են թէ ոչ: Նոյն օրը, կէսօրից
յետոյ կրկնվեց կարկտախառն սաստիկ անձրև:
Կուր դետի ջուրը այժմ սաստիկ բարձրացել է:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան
անդամները հրաւիրուում են ներկայ լինել հեր-
թական ընդհանուր ժողովին, որը կայանալու է
հինգշաբթի, մայիսի 12-ին, երեկոյեան 7 1/2 ժա-
մին: Հերթական դործերը վերջացնելուց յետոյ
ժողովը կը լսի պ. Ստրուվէի զեկուցումը «Գիւնի-
ները կեղծելու մասին» և պ. Էնֆիլաճեանի զե-
կուցումը «Միջազգային դործութեան մասին»: Ժո-
ղովին ներկայ կարող են լինել և կողմնակի ան-
ձինք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՏԻԿԱՆԸ ԵՒ ԻՐԱՆԻԱԿԱՆ ՀԱՐՅԸ

Ինչպէս յայտնի է, անդիական պահպանողական
միջնորդութիւնը՝ Իրանդիպուսի իր պրոգրամը
գործադրելու համար դիմեց Վատիկանի օգնու-
թեանը, և պատկան ձեռքով դարձրեց, կաթոլիկ-
իրանդիպուսի վրա ազդելու համար Սալ-
բիի կաթոլիկ կամեցաւ օգուտ քաղել Հռոմի
պապի կրօնական հեղինակութիւնից, որպէս զի
այդ հեղինակութեան միջոցով կարողանայ զրդե-
լիւրանական ժողովուրդը այն մարդկանց դէմ,
որոնք հանդէս են եկել իրեն իրանական ին-
նապարտութեան և տնտեսական ազատ զարգացման
պաշտպան, որոնք տարիներից է վեր թէ անդիա-
կան պարլամենտում և թէ նոյն իսկ իրանական
հոգի վրա արծարծում են այն հարցերը, որոնց
միակ նպատակը այդ թշուառ ժողովրդի խաղաղ
և անարգել զարգացման գործն է, և որից նա
զրկվել է այն քաղաքական և հոգային տիրապե-
տութեան սխտեկներէ շնորհիւ, որոնք գոյու-
թիւն ունեն իրանդիպուսի:

Բայց այդ բոլոր նախադէպերը անաջողութեան
հանդիպեցին: Պապի՝ կաթոլիկ եկեղեցու այդ ա-
մենազօր կարծիքը հոգեւորականի միջամտութիւնը
չօղենց գործին, և Լէօն XIII պապի թուղթը
ոչ թէ միայն չազդեց իրանդիպուսի վրա, այլ
նոյն իսկ առաջ բերեց մի խիստ բողոք ոչ թէ
միայն ժողովրդի, այլ և իրանական կաթոլիկ
հոգեւորականութեան կողմից: Այդ քայլը առան-
ձին ուշադրութեան արժանի է: Իրանդիպուսի կա-
թոլիկ բարձրաստիճան հոգեւորականները դէմ են
պապի չըջաբերականին, և ինչպէս գրում են
Գուրլինից, պատրաստում են մի բողոքագիր
Վատիկանի կարգադրութիւնների դէմ: Իրանդի-
կան հոգեւորականութեան այդ քայլը իսկապէս
սպասելի էր. վաղուց յայտնի է, որ այդ հոգեւոր-
ականութիւնը, մանաւանդ ստորին աստիճանի հո-
գեւորականները, բուն ժողովրդական ոգի ունեն,
անբաժան մասնակից են ժողովրդի ցաւերին, և

պէս ապացուցանում են երկար ժամանակների
դիտողութիւնները, այդ վնասակար սաղմերի
զարգացման զլստուր միջոց ներկայացնում են՝
կեղտոտ ջուրը և անմաքուր օդը: Շատ անգամ
դիտած և նշմարած է, որ տիֆը, խոլերան, դիֆ-
տերիա և ուրիշ տեսակ վարակիչ հիւանդու-
թիւնները աւելի սաստկանում և աւելի շատ կո-
տորած են անուռ այնտեղ, ուր ազդեցականու-
թիւնը ապրում է վատ օդի մէջ և խմում է ա-
ղակալիված գետի ջուր: Հէնց այս տարի տպվե-
ցաւ «Մշակի» մէջ, որ Թիֆլիսի հիւանդանոցնե-
րում, բժշկների նկատողութեամբ, տարափոխիկ
հիւանդութիւնները սկսել են պակասել այն պատ-
ճառով, որ Թիֆլիսում, Կուրի փոխարէն, սկսե-
ցին գործածել Աւստրիայի պարզ ջուրը: Սրանից
պարզ երևում է, որ գետի ջուրը, առհասարակ,
չէ կարող ծառայել որպէս խմելու, որ այդ ջու-
րը, ամեն ժամանակ, զանազան յաջող հանգա-
մանքներում, կարող է զարգացնել ժողովրդի մէջ՝
վտանգաւոր տարափոխիկ հիւանդութիւններ: Սա-
կայն ջրի տուած վնասը աւելի մեծ և չօշակելի
է լինում, երբ մարդիկ խմում են առանց մաքրե-
լու, հեռացնելու նրա մէջ եղած օրգանական
մասնիկները: Մեր ժողովուրդը ամենին ուշա-
դրութիւն չէ դարձնում թէ ինչ յատկութիւններ
ունի նրա խմած ջուրը. պարզ է, թէ պղտոր-

զգալով այդ ժողովրդի վշտերը, ի հարկէ չեն կա-
րող համամիտ լինել նոյն իսկ կաթոլիկ եկեղեցու
զլխաւորի յայտնած մաքրի հետ, որը պաշա-
պանելով անդիական միջնորդութեան քաղաքա-
կանութիւնը, մոռանում է այն տնտեսական կրի-
զիւրը, որի մէջ խորատուզված է ամբողջ իրան-
դիան: Եւ այդպիսով Վատիկանը սխալվեց իր հա-
շիւների մէջ: Հռոմի պապը մեծ յոյս ունէր իր
անուան և աստիճանի վրա. բայց իրողութիւնը
ցոյց տուեց հակառակը. Իրանդիպուսի չէ լսում
Վատիկանին, անկարող լինելով հաշտեցնել իր դո-
յութեան կարեւր խնդիրները Հռոմի պապի քա-
ղաքադիտութեան հետ: Պապը իր հաշիւների մէջ
սխալվեց. և այս րօպէիս Վատիկանի ազդեցու-
թիւնը և վարկը մեծ վտանգի են ենթարկված ամ-
բողջ իրանդիպուսում, որը ամեն րօպէ և ամեն
քայլափոխում հետևում է այն պրոգրամներին, ո-
րոնց միտքը յայտնի է ոչ թէ միայն Անդիպուսի,
այլ և ամբողջ Եւրոպային:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Այս օրերս փարիզում էլզաս-Լօթարինդիպուսի
մանուկներին պարզեցին բաժանելու առիթով,
պատգամաւոր Զիգֆրիդ մի ճառ արտասանեց,
որի մէջ ասեց հետեւեալը. «Յրանսխայի և Գեր-
մանիայի մէջ եղած պատերազմը այնպիսի թշուա-
ռութիւն էր երկու ժողովուրդներին համար, որ
որի չափը ոչ ոք չէ կարող որոշել: Եթէ բարեկա-
մական համաձայնութիւն կայանար դրանց մէջ,
երկու ազգերն ևս այնպիսի օգուտներ կունենային,
որոնց նշանակութիւնը դնանաւ դժուար չէ:
Պատերազմը մեծ չարքներ առաջ բերեց, և եթէ
նրկան մտալ գոյում է ներկայանում մեզ, ա-
պագան առաւել ևս մտալ կը լինի ամերիկական
մրցման պատճառով: Այն ինչ Յրանսխայի և Գեր-
մանիայի մէջ եղած առեւտրութեան միակ պատճա-
ռը էլզաս-Լօթարինդիպուսի՝ արեւօք չէր կարելի
ստանձնել մի Զիգֆրիդը, ջնջել այդ առեւտրութիւնը
խաղաղ ճանապարհներով, այսինքն օրինական
կերպով վարձատրելով Գերմանիան»:

—Կ. Պոլսից մեզ գրում են հետեւեալը. «Թիւր-
քաց սուլթանը, վերջին անգամ, երբ իր մօտ էր
հրաւիրած Յարութիւն Պատրիարքին, յանձնարա-
րած էր նրան տեսակցել քիւրդ խմայիլ փաշայի
հետ, որ շատ ժամանակ Հայաստան եղած է և
պատերազմի տարին իրողութեան էր: Այդ տեսակ-
ցութիւնը տեղի է ունեցել, բայց թէ ինչ նպա-
տակով և ինչ է խօսեցվել,—յայտնի չէ»:

—Բերլինից հեռագրում են, որ արեւելեան
Պրուսիայում գտնվող զօրքերի թիւը մեծացնում է:

—Անդիական զօրաբանակը մեծացնելու հա-
մար Անդիպուսի զանազան քաղաքներում միտինգ-
ներ են լինում, որոնք այդ հարցը ջերմ կերպով
պաշտպանում են:

—Լեհաստանի գերմանացիները և ուրիշ
Պրուսիայում շարունակում է զբաղեցնել գերմա-
նացի քաղաքագէտներին: Լեհական չըջանների
զարգացումը քիւրդ մտքնում է գերմաներէն

այդ մի և նոյն է նրա համար: Առհասարակ,
մաքրապիտութեան գաղափարը անքան թույլ է
մեր մէջ, որ կերածի և խմածի մաքրութիւնը,
խտաւորութիւնը՝ շատ քիչ է հետաքրքրում ժո-
ղովրդին: Մեր հասարակութեան մէջ տարած-
ված է այն կարծիքը՝ թէ «մարդը բերանից ներս
դնացածը, նրան չէ ապականում», այսինքն՝ թէ
որքան էլ կեղտոտ և անմաքուր լինի մարդը կե-
րած և խմածը, դարձեալ այդ բոլորը կը մարտի:
Կանհետանայ ստամոքսի մէջ և նրան չէ վնասի:
Այս կարծիքը չէ հիմնված ոչ մի ճշմարիտ, իրա-
կան երևոյթի վրա և առաջացել է այն հանգա-
մանքից, որ, շատ անգամ, ժողովուրդը իր անմա-
քրութեան և անհոգութեան արժանի պատիժը
խկոյն չէ ստանում բնութիւնից: «Громъ не гря-
нетъ, мужикъ не перекрестится»,—ասում է
ռուսաց ժողովրդական առածը: Հշմարիտ, որ
միայն ամպի գոռոցը կարող է ազդել մեր հասա-
րակութեան վրա, և այդ բանը մենք շատ ան-
գամ տեսնում ենք իրականութեան մէջ: Մի ռուս
բժիշկ, անցեալ տարի, շատ իրաւացի կերպով
նկատեց ինձ, թէ ձեր հասարակութիւնը իր կեան-
քի պահպանութեան մասին ամենին չէ մտա-
ծում: «Աղքատը չէ կարող, իսկ հարուստը լը-
նայում է իր փողերը»: Եւ այս մի անհերքելի
ճշմարտութիւն է: Միջանում ունեւոր դասակարգը

կեղծւում, որով ստիպված են աւանդել նոյն իսկ
կրօնը: Այդ հարցի առիթով, որը մեծ աղմուկ է
հանել, լեհական կուսակցութիւնը մտադիր է
հարցապնդում անել պրոսական սէյմի մէջ:

ԻՍՈՐԼ ԼՈՒՐԵՐ

Լօնդոնի ռատիկալութիւնը նորերս գտաւ մի դա-
ւադրութեան հետք. մտադրութիւն կար դիւնամի-
տով աւելի անդիական պարլամենտը: Ուստի կա-
նութիւնը միջոցներ է ձեռք առել պարլամենտը
պաշտպանելու համար:

Բերլինում կատարված փորձերը ցոյց տուեցին,
որ կարելի է այնպիսի վառօդ պատրաստել, որը
բունկերով ծուխ չը հանէր: Շուտով այդպիսի վա-
ռօդ կը սկսեն գործածել գերմանական զօրքերը:

Հռոմի մէջ, որեւորված կաթոլիկների այդ հնա-
դարեան հայրենիքում, այժմ խօսակցութեան նիւ-
թը ոչ Բիսմարկի ճառն է, ոչ Բուլանդին է, և ոչ էլ
իտալական զօրքերի արաւանքն է դէպի Աֆրիկա,
այլ այն միջնադէպը, որ նորերս պատահել է
Վատիկանում, երբ չիլիական թագաւորը այցե-
լութեան եկաւ Հռոմի պապին: Սովորութիւնը
խախտված է, թագաւորը պապի մօտ մտնելով
համբուրեց ոչ թէ նրա ձեռքը, այլ նրա թուշը,
և այդ բանը անկերջանալի խօսակցութիւննե-
րի նիւթ է դարձել: Կաթոլիկների կարծիքով դա
գուցէ և սրբապօղծութիւն է:

Թէ ինչպէս են կարգում Ֆրանսիացիք Իմի-
ջօլայի գրուածքները, այդ երևում է հետեւեալից.
Զօլայի «Nana» կոչված բօմանը ունեցել է արդէն
150 տպագրութիւն. «Assomoir» վէպը 111,
«Pot-bouille» 75, «Germinal» 72, «La terre»
66 և այլն: Զը պէտք է մոռանալ և այն, որ այդ
գրուածքներից իւրաքանչիւրը ամեն անգամ տպա-
գրվել է մօտ 100.000 օրինակի քանակութեամբ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մայիսի: Հրատարակված է
անտառների պահպանութեան վերաբերեալ կանո-
նադրութիւնը: Այդ կանոնադրութեան զօրութիւ-
նը տարածվում է ամեն տեսակ անտառների վը-
րա. որովհետեւ են միջոցներ, որոնցով պէտք է
պաշտպանել անտառները ոչնչանալուց և որոն-
ցով պէտք է զարկ տալ կանոնաւոր անտառային
տնտեսութեան գործին: Այն անտառները, որոնց
անպայման պահպանութիւնը անհրաժեշտ է պե-
տական կամ հասարակական շահերի համար, են-
թարկվում են պահպանութեան առանձին միջոց-
ներին: Պահպանութեան պէտք է ենթարկվեն այն
անտառները, որոնք փխրուն աւաղի առաջն են
առնում, որոնք պահպանում են աւաղային հո-
սանքներից քաղաքները, դիւրերը և ճանապարհ-
ները, որոնք պահպանում են գետերի ափերը և
թուփերի ու ժայռերի պոկվելու առաջն են առ-
նում: Այդպիսի պահպանող անտառներում ար-
գելվում է ծառեր կտրտել, փչացնել ար-
մատներ, և տոււար արածացնել, եթէ այդ վնա-

լի փողերը շատ անգամ ծախսում է հասարակ,
երկնայական շաքարովիները վրա, իսկ անհրա-
ժեշտ կենսական պիտոյքների մէջ խնայողու-
թիւն է անուռ: Եւ այս տեսակ անմիտ խնայո-
ղութիւնը յաճախ աւելի թանկ է նստում նրանց
վրա: Քանի որ մարդը առողջ է, նա բոլորովին
չէ մտածում պահպանել իր առողջութիւնը. փողի
և հարստութեան սիրով տոգորված, նա գիշեր-
ցերեկ մտածում է իր շահի, նիւթական օգուտ-
ների մասին, արհամարհելով կեանքի և առողջու-
թեան գլխաւոր պիտոյքները: Եւ ահա, մի գեղե-
ցիկ օր, նա լսում է իր զկուր վրա շատիկ գոռո-
ցը. նրա ընտանիքի մէջ առաջանում է վտան-
գաւոր հիւանդութիւն, որից դժբաղդ հետևանքներ
են սպասվում: Այստեղ յանկարծ նա բաց է ա-
նում իր աչքերը և անխնայ կերպով սկսում է
վտանգ իր «սիրելի» ուկիւն ու արծաթի, յուսա-
լով փրկել իր ընտանիքը մահուան ճանկերից: Եւ
ենեակները տաքացնելու համար, այժմ տանա-
պատիկ աւելի է միտում դեղերի ու բժշկների
վրա: Այսպէս լինում է և ամեն տեղ: Մեր հա-
սարակութիւնը լսել է, որ խնայողութիւն պէտք
է անել՝ բայց չը գիտէ, թէ ճիշտ և ինչ բանե-
րում: Արտաքին շեղութեան, զգեստի և զարդա-
րանքի համար մեղանում աւելի առատ են մար-

սակար է: Եթէ հարկաւոր կը լինի ծախսեր անել
և գործ դնել տնտեսական միջոցներ հասարակու-
թիւնների և մասնաւոր անձանց պատկանող
պահպանող անտառները փչացնելուց ազատ պա-
հելու համար, իսկ տէրերը չեն կամենայ այդ
ծախսերը յանձն առնել, այդ դէպքում պե-
տական կառավարների միջնորդութիւնը իրա-
ւունք ունի այդպիսի անտառները ձեռք բերել
զանձարանի համար, զանձարանը մտնող կառ-
ւածքների գնահատութեան պայմանների համե-
մատ, իրաւունք տալով, որ 10 տարվայ ընթաց-
քում դրանց յետ գնին: Ոչ-պահպանող համարված
անտառների հողը կարելի է ուրիշ տեսակ ար-
դիւնաբերութեան ծառայեցնել մի բանի դէպքե-
րում, այն է, երբ հարկաւոր է, մշակել խաղողի
որթ, կամ անկել պտղատու այգիներ, կառուցա-
նել անտառային ամառանոցներ, անցկացնել ճա-
նապարհներ, շինութիւններ անել և այլն: Արգել-
վում է ամայացնող կերպով ծառերի կտրտելը,
որը կարող է միանգամայն ոչնչացնել ծառա-
տունը, այլ և տոււար արածացնել այն տեղե-
րում, ուր ծառերը ջանջ են և տան և հինդ
տարեկանի չեն հասնել: Պահպանող անտառները
ազատվում են պետական և գէմետայի տուրքե-
րից, այնպէս և արհեստական անտառները զար-
գացնելու համար որոշված տախարակները,—30
տարվայ ընթացքում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մայիսի: «Русский Инвалидъ»
լրագիրը հաղորդում է Անդրկասպեան չըջանի
զօրքերի ժամանակաւոր-հրամանատարի հետեւեալ
հեռագիրը մայիսի 7-ից. Մէյմլինիսան դատաւում
ապրող սօլարները վաղուց արդէն խնդրում են
մեզ զաղթել Սերախի կողմերը: Թայտութիւն
չը ստանալով, և նոյնպէս աւազանական կառավա-
րիչների ճնշման պատճառով, վճռեցին թիւով 168
հոգի, երկու տեղի, 240 զուգի արագատի փախ-
չել դէպի մեր սահմանները, և այդ փախտուոր
կատարվեցաւ ապրիլի 14-ին դիշերով: Անցնելով
դէպի մեր սահմանը, խաղաղաբար ջրօրներին
ոչ հեռու, Տախտի-Բաղարից 150 վերստ հեռաւոր-
ութեամբ, վրա հասաւ նրանց 200 ձիււորներից
բաղկացած աւազանական հեծելախումբը, մեր հո-
գի վրա, սահմանից 36 վերստ հեռաւորութեամբ,
և սկսվեցաւ հրացանաձգութիւնը սօլարների և
աւազանների մէջ: Առաւօտեան ազանական հե-
ծելախումբը յետ քաշվեցաւ, տանելով իր հետ իր
վիրաւորվածներին և սպանվածներին, որոնց թի-
ւը յայտնի չէ: Սօլարներից սպանվեցան երկուսը
և վիրաւորվեցան հինգ հոգի: Այդ սօլարները
գնացին դէպի Տախտա-Բաղար, ուր նրանց հետ
միաժամանակ եկաւ և Ալիսանով, որը ուղարկեց
նրանց Սերախի՝ այնտեղ բնակութիւն հաստատե-
լու համար: Պետերբուրգ հասաւ օգոստոսի 1-ին,
որը վիեննայում հրատարակվող ալաւական օր-
գան «Արլամենտ»-ի խմբագիր է, և որը յայտ-
նի է Աւստրիայում իր աննցած դատով:

ԲԵՐԼԻՆ, 11 մայիսի: Այսօր ժամանեց այստեղ
Մեծ-Իշխան Սէրգի Ալեքսանդրովիչ իր ամուսնու
հետ՝ ներկայ լինելու կայսրի երկրորդ օրդի՝ Հէն-
րիխի պատկարցութեամբ Մեծ-Իշխանուհի Ալիսա-
վետա Ֆեօդորովնայի քրոջ՝ Իշխանուհի Իրինայի
հետ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ
Մայիսի 10-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ. . . 119 Բ. 75 >
Համբուրգի վրա 100 մարկ — . . . 58 > 95 >
Փարիզի վրա 100 ֆրանկ — . . . 47 > 10 >
Ոսկի — արծէ — . . . 9 > 57 >

դիկ, քան թէ հասարակ առողջական պահանջնե-
րի, կեանքի անհրաժեշտ և օգտակար պիտոյքնե-
րի համար: Ինչ որ ընական է, օգտակար է, խե-
լացի է կեանքի մէջ, այն չէ կատարում մեր ժո-
ղովրդը, իսկ մօղայի և արտաքին շաքարու-
թեան յիմար պարագաները գրաւում, շրջնում
են նորա աչքերը: Եւ այս պատճառով շատ ան-
գամ Աստուած խիստ կարգով պատժում է մար-
դկանց՝ իրանց տգիտութեան, իրանց կեանքի և
ապրուստի օրէնքները չը գիտենալու համար:
Այս, տգիտութեան... Եթէ մեր հասարակութիւ-
նը մի լաւ մտածէ, այն ժամանակ նա կը համոզ-
վի անշուշտ, որ կեանքի մէջ պատահած բոլոր
թշուառութիւնների առաջին և գլխաւոր պատճա-
ռը՝ իր տգիտութիւնն է: Ոչինչ բան այնպէս
թանկ չէ նստում ժողովրդի վրա, ինչպէս նորա
տգիտութիւնը, իմարութիւնը: Եւ ընդհանրապէս,
որքան մի ժողովուրդը աւելի ծանօթ լինի գիտու-
թեան հետ, որքան խորը տարածված, արմատա-
ցած լինի կեանքի մէջ իրական և ճշմարիտ գի-
տութիւնը, այնքան էլ բաղաւոր, խելացի և կա-
նոնաւոր կը լինի մարդկանց կեանքը: Մեր ժողո-
վուրդը աղքատ է, հիւանդ է, թշուառ է,—որով-
հետեւ նա տղէտ է. նորա միակ դեղը, միակ փր-
կութիւնը—առաւմն է, գիտութիւնն է:

Ե. Ղազարեանց

